


հաշտութեան, եւ որդիք նորա ժառանգեցեն զտէրութիւն Անտիոքայ: Կնքեցան դաշինքն երդմամբ եւ գրով, եւ արձակեցան իշխանն եւ իշխանուհին եւ ամենայն ազատք եւ ծառայք նոցին: Յետ կատարման սգոյ Ալիծայ՝ որ դեռ եւս իբր չորեքտասանամեայ էր, հրաւիրեցաւ Ռեմունդ⁴⁶ ՚ի փեսայութիւն, մեծահանդէս հարսանեօք (թուի ՚ի նմին ամի 1194), եւ կայր առ Լեւոնի, իբրեւ ՚ի պատանդի. այլ ըստ պատմչին մերոյ՝ համարձակ «մտանէր եւ ելանէր ընդ նմա». բայց ըմբռնեալ յախտէ սաստիկ հիւանդութեան՝ մեռաւ կարճօրեայ (յամի 1195 կամ 97), յի թողեալ զկինն. յորմէ «ծնաւ որդի արու, վայելուչ եւ գեղեցիկ տեսեամբ», ըստ պատմչին. եւ յորժամ յետ ամի միոյ կամ երկուց մկրտեցաւ, ՚ի մեծէ արքեպիսկոպոսէն Լատինաց՝ որ զթագն եբեր եւ պսակեաց զԼեւոն, կոչեցաւ տղայն միանգամայն յանուն հօր իւրոյ եւ մայրենի հաւուն՝ **Ռուբէն-Ռեմունդ**. եւ զի ոչ գոյր Լեւոնի զաւակ արու՝ խորհէր ՚ի մտի իւրում զնա կարգել իւր ժառանգ, եւ այնու ձուլել զերկոսին՝ ՚ի մի պետութիւն մեծ եւ հզօր, զչայոցն եւ զԱնտիոքեայց. եւ մեծաւ զգուշութեամբ սնուցանէր զթոռնագիրն՝ ամս բազումս: Այլ որ յայսմ ժամու հաշտութեան եւ միաբանութեան առիթ լինէր երկոցուն պետութեանցն տղայն, ընդ հուպ մեծագունի եւս եւ յերկարագոյն գծութեան եւ հակառակութեան լինելոց էր իսայծ, եւ բազում վարանաց եւ հոգոց Լեւոնի, թէ կամաւ թէ ակամայ:



Քանզի անդէն իսկ ՚ի տարածման մահուան Ռեմունդի՝ եղբայր նորա կրսեր՝ *Պեմունդ* (Դ) անուանեալն *Միականի* (Le Borgne), որ աղիկամի կորզեալ ունէր զկոմսութիւն Տրիպօլեայ, չարարեալ բնաւ երեսս՝ ոչ դաշանցն եւ երդմանց կռելոց վասն պայագատութեան զաւակաց եղբօր իւրոյ անդրանկան, եւ ոչ ալեաց հօր իւրոյ՝ որ տակաւին կենդանի էր, ձեռներեց եղեւ յափշտակել յերկոցուն եւս զգահն, յոր մին նստէր եւ միւսն

⁴⁶ Ի պարզեագրի միում որդւոյ իւրոյ Ռուբինի (1216, սեպտ. 1) մականունանի Ռեմունդս այս Rat, ոչ գիտեմ վասն էր: